ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 15.11.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ

ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2018/145

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 15.10.2018թ. թիվ 01.1/26-3/11906-18 գրությամբ «ՄԱԴԵԼ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00907267) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 04.10.2018թ. թիվ 8.1-416 գրության հիման վրա, 15.10.2018թ. նախաձեռնել է «ՄԱԴԵԼ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

2. <u>«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն 04.10.2018թ. թիվ 8.1-416 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««ՄԱԴԵԼ» ՍՊԸ-ն չի կատարել «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի և «ՄԱԴԵԼ» ՍՊԸ-ի միջև 2018թ. ապրիլի 13-ին կնքված թիվ 2.64 պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման պարտավորությունը, ուստի առաջնորդվելով նշված պայմանագրի 2.1.7 կետով «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն հուլիսի 30-ին միակողմանի լուծել է պայմանագիրը»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էին «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի լիազորված ներկայացուցիչներ Արտակ Փահլեվանյանը և Յուրի Իվանովը:

3. <u>«ՄԱԴԵԼ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«ՄԱԴԵԼ» ՍՊԸ-ն 31.10.2018թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

««ՄԱԴԵԼ» ՍՊԸ-ն ս.թ. ապրիլի 13-ին «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի հետ կնքել է պայմանագիր մասնագիտական հագուստ մատակարարելու համար: Համաձայն պայմանագրի տեխնիկական բնութագրում նշված լրացուցիչ պայմանի, մատակարարվող հագուստի չափսերը պետք է համապատասխանեին աշխատողների անհատական չափսերին, այսինքն, պետք է կատարվեր անհատական պատվեր: Նշված պահանջը ապահովելու համար մեր աշխատակիցները եղել են «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ում, անհատական չափսեր վերցնելու համար: Սակայն նրանց կողմից չի ապահովվել բոլոր աշխատողների ներկայությունը, որի պատճառով համաձայնություն է ձեռք բերվել նրանց հետ, որ աշխատողներին ուղարկեն Ընկերության արտադրամաս՝ չափսեր վերցնելու համար, որը երկարաձգվել է նրանց կողմից: Ս.թ. հուլիսի 2-ին էլեկտրոնային փոստի միջոցով տեղեկացրել ենք, որ դեռևս չեն ապահովել իրենց աշխատողներին չափսեր

վերցնելու համար: Իսկ ս.թ. հուլիսի 3-ին մատակարարվել է ապրանքների 5-րդ չափաբաժինը, որի համար դուրս է գրվել համապատասխան հաշիվ-ապրանքագիր, որը մեզ անհայտ պատճառներով չի ստորագրվել, ինչպես նաև armeps համակարգի միջոցով ուղարկվել է հանձնման-ընդունման արձանագրությունը: Սակայն մեզանից անկախ պատճառներով համակարգի խափանման հետևանքով այն չի բացվել: Դրա մասին մեզ տեղեկացրել են միայն ս.թ. հուլիսի 30-ին: Կրկին հուլիսի 30-ին պատվիրատուի պահանջով ուղարկվել է հանձնման-ընդունման արձանագրությունը, որն ընդունվել է և բացվել է, սակայն եզրակացության մեջ նշվել է, որ հուլիսի 30-ին պայմանագիրը միակողմանի լուծելու պատճառով տրվում է բացասական եզրակացություն: Պայմանագիրը միակողմանի լուծելու փաստը Ընկերության համար անհասկանալի է, քանի որ հենց ամսի 30-ին պատվիրատուն պահանջել է հանձնման-ընդունման արձանագրություն: Ընկերությունն ուներ նաև բանավոր պայմանավորվածություն պատվիրատուի աշխատողների ապահովման վերաբերյալ, քանի որ նրանք աշխատում են հանրապետության տարբեր մարզերում: Ուստի պայմանագիրը լուծվել է պատվիրատուի կողմից անհիմն:»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Ընկերության լիազորված ներկայացուցիչ Աշոտ Ազիզյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/145 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 15.10.2018թ. թիվ 01.1/26-3/11906-18 գրությունը և կից փաստաթղթերը, «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի 04.10.2018թ. թիվ 8.1-416 գրությունը, «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի և «ՄԱԴԵԼ» ՍՊԸ-ի միջև 13.04.2018թ. կնքված թիվ 2.64 գնման պայմանագիրը (ծածկագիրը՝ «ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-20/18»), «ՄԱԴԵԼ» ՍՊԸ-ի 31.10.2018թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնած դիրքորոշումը.

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի և «ՄԱԴԵԼ» ՍՊԸ-ի միջև 13.04.2018թ. կնքվել է թիվ 2.64 (ծածկագիրը՝ «ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-20/18») գնման պայմանագիրը (այսուհետ՝ նաև Պայմանագիր) 1-ից 5-րդ չափաբաժինների մասով:

Պայմանագրի՝

•1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է նույն պայամանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավաներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

• 2.1.1 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի՝ ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

•2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

•2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

• 2.4.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

• 2.4.2 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավոր է Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

• 3.1 կետի համաձայն՝ պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 2,836,800 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):

• 5.1 կետի համաձայն՝ Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ

հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը: Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3):

- 8.9 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Պայամանգրի N 1 հավելվածով նախատեսված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է լրացուցիչ պայման, այն է. «Պարտադիր պայման է հանդիսանում ապրանքների չօգտագործված լինելը: Անկախ Պատվիրատուի կողմից ներկայացված բնութագրերի շահող կազմակերպությունը պարտավոր է նախատեսված համազգեստների վերջնական չափսերը ճշտել տեղում և նախքան ապրանքը մատակարարելը պարտավոր է կատարել ճշգրտում (примерка)՝ առկա թերությունները վերացնելու նպատակով»:

Նույն Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով ապրանքի մատակարարման վերջնաժամկետ է սահմանվել 15.06.2018թ.:

Ընկերությունը պարտավորվել է մատակարարել հետևյալ անվանումներով ապրանքները.

1-ին չափաբաժին. Հատուկ արտահագուստ՝ էլ. զոդողի հատուկ համազգեստ;

2-րդ չափաբաժին. Հատուկ արտահագուստ՝ արտահագուստ բանվորական (ամառային);

3-րդ չափաբաժին. Հատուկ արտահագուստ՝ արտահագուստ բանվորական (ձմեռային);

4-րդ չափաբաժին. Հատուկ արտահագուստ՝ արտահագուստ բանվորական (ձմեռային);

5-րդ չափաբաժին. Հատուկ արտահագուստ՝ ձմեռային ալպինիստական արտահագուստ:

2018թ. հունիսի 25-ին Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից Ընկերության էլեկտրոնային փոստին ուղարկվել է ծանուցում, որում վերջինս նշել է, որ «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի և «ՄԱԴԵԼ» ՍՊԸ-ի միջև 13.04.2018թ. կնքված 2.64 պայմանագրով սահմանված ապրանքի մատակարարման ժամկետն ավարտվել է ս.թ. հունիսի 15-ին, և պահանջել է տալ պարզաբանում պայմանագրի կատարման վերաբերյալ:

Ի պատասխան վերը նշված ծանուցման՝ 28.06.2018թ. Ընկերությունը տեղեկացրել է Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման ղեկավարին, որ ապրանքի մատակարարման ժամկետի խախտման պատճառը եղել է ներքաղաքական լարված իրավիճակը, որը հնարավորություն չէր տալիս նորմալ աշխատանքային ընթացքն ապահովելու համար: Ընկերությունը՝ հայցելով Պատվիրատուի ներողամտությունը, պարտավորվել է հնարավորինս սեղմ ժամկետներում իրականացնել մատակարարումը:

Այնուհետև, 02.07.2018թ. Ընկերությունը դիմել է Պատվիրատուին՝ տեղեկացնելով, որ արդեն իսկ լրացել է պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետը, սակայն մինչ այդ օրը Պատվիրատուն չի ապահովել իր աշխատակիցների ներկայությունը՝ անհատական չափսեր վերցնելու համար: Ընկերությունը խնդրել է ապահովել աշխատակիցների ներկայությունը՝ չափսեր կատարելու համար և հնարավորինս երկարացնել մատակարարման ժամկետը:

Ընկերությունը 03.07.2018թ. մատակարարել է Պայմանագրի 5-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքը, որի վերաբերյալ կազմվել է հանձնման-ընդունման արձանագրություն և դուրս է գրվել հաշիվ-ապրանքագիր՝ 299,999,88 ՀՀ դրամ գումարի չափով: Սակայն, Պատվիարտուի գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից կատարվել է անհամապատասխանությունների մասին հետևյալ նշումը. «Հաշվի առնելով, որ էլեկտրոնային armeps համակարգում «ՄԱԴԵԼ» ՍՊԸ-ի կողմից պայմանագրի 5-րդ չափաբաժնով ներկայացված ապրանքի հանձնման-ընդունման արձանագրությանը կից

մատակարարման ապրանքագրի PDF ֆայլը չի բացվում, ուստի դրական կամ բացասական եզրակացություն չի տրվում, և այն ենթակա է ետ վերադարձման մինչև մատակարարի կողմից ապրանքագրի նոր տարբերակի ներկայացնելը»:

2018թ. հուլիսի 30-ին Ընկերությունը կրկին անգամ ուղարկել է հանձնման-ընդունման արձանագրությունը, որն ընդունվել և բացվել է, սակայն պայմանագրի կատարման արդյունքների վերաբերյալ Պատվիրատուի կողմից 31.07.2018թ. տրվել է բացասական եզրակացություն, հետևյալ մեկնաբանությամբ. «խախտվել է պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետը և 2018թ. հուլիսի 30-ին վերոնշյալ պայմանագիրը միակողմանի լուծվել է»:

Պատվիրատուն 30.07.2018թ. N8.1-309 գրությամբ Ընկերությանը հայտնել է, որ վերջինիս կողմից չի կատարվել «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի և «ՄԱԴԵԼ» ՍՊԸ-ի միջև 13.04.2018թ. կնքված 2.64 պայմանագրով սահմանված ապրանքի մատակարարման պարտավորությունը, և նույն պայմանագրի 2.1.7 կետի համաձայն «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն միակողմանի լուծել է պայմանագիրը:

Ընթացակարգի քննության նպատակով կայացած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման պատճառաբանությունները՝ հայտնեց, որ պայմանագրի տեխնիկական բնութագրում նշված լրացուցիչ պայմանի համաձայն՝ մատակարարվող հագուստի անհատական պատվերն ապահովելու համար Ընկերության աշխատակիցներն այցելել են «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ՝ աշխատակիցների անհատական չափսերը վերցնելու նպատակով, սակայն Պատվիրատուի կողմից տևական ժամանակ չի ապահովվել բոլոր աշխատակիցների ներկայությունը և արդյունքում, միայն 10.07.2018թ. դրությամբ Ընկերությունն ունեցել է Պատվիրատուի մոտ 80 տոկոս աշխատակիցների անհատական չափսերը: Ընկերության ներկայացուցիչը նշեց, որ թեև Պատվիրատուն Ընկերության հետ ուներ բանավոր պայմանավորվածություն՝ անհատական չափսերը վերցնելու համար Պատվիրատուի աշխատողների միաժամանակյա ներկայությունը նույն վայրում ապահովելու վերաբերյալ, սակայն ըստ վերջինիս, այն գրեթե անիրագործելի էր, քանի որ այդ աշխատակիցներն աշխատում են հանրապետության տարբեր մարզերում:

Որպես ասվածի ապացույց, Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին ներկայացրեց Ընկերության կողմից վարվող՝ արտահագուստի անհատական չափսերի գրանցումների գիրքը, որում Պատվիրատուի համապատասխան պաշտոնատար անձ՝ Բ. Գևորգյանի կողմից 10.07.2018թ. թվագրվել և ստորագրությամբ հաստատվել է «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի համապատասխան աշխատակիցների անհատական չափսերի վերաբերյալ նշումները, ընդ որում, այդ նշումները վերաբերում են երկու առանձին՝ «Մռավյան» և «Անդրանիկ», ստորաբաժանումների աշխատակիցների անհատական չափսերին:

Պատվիրատուի ներկայացուցիչները նշեցին, որ Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո տևական ժամանակ Ընկերությունը ցուցաբերել է անգործություն, փաստացի չապահովելով պայմանագրով ստանձնած պարտավորության կատարումը, թեև ընդունեցին, որ միայն 10.07.2018թ. դրությամբ Պատվիրատուի կողմից Ընկերությանը հնարավորություն է տրվել ունենալու Պատվիրատուի մոտ 80 տոկոս աշխատակիցների անհատական չափսերը: Պատվիրատուի ներկայացուցիչներն ընդունեցին նաև, որ Պատվիրատուն Ընկերության հետ ուներ բանավոր պայմանավորվածություն պատվիրատուի աշխատողների ներկայությունն ապահովելու վերաբերյալ, ինչը սակայն, ժամանակին չի կատարվել:

Ինչ վերաբերում է Պայմանագրի կատարման արդյունքների վերաբերյալ Պատվիրատուի կողմից 31.07.2018թ. տրված բացասական եզրակացությանը, ապա Պատվիարտուի ներկայացուցիչները նշեցին, որ այն տրվել է՝ հաշվի առնելով այն փաստը, որ նույն օրով Պատվիրատուի կողմից պայմանագիրը միակողմանի լուծվել է, թեև մատակարարված ապրանքն իր տեխնիկական բնութագրով համապատասխանել է Հրավերով սահմանված պահանջներին:

Բողոքներ քննող անձի այն հարցին, թե արդյոք Պատվիրատուն որևէ միջոց է ձեռնարկել Ընկերության կողմից պայմանագրի կատարման արդյունքը սահմանված ժամկետներում ստանալու կապակցությամբ, Պատվիարտուի ներկայացուցիչները նշեցին, որ բազմիցս բանավոր դիմել են Ընկերությանը՝ հորդորելով կատարել ստանձնած պարտավորությունները, սակայն Պայմանագրի կողմին ուղղված որևէ գրավոր դիմում Պատվիրատուն չի ներկայացվել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.
- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի մոտ՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- «ՄԱԴԵԼ» ՍՊԸ-ն 13.04.2018թ. «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի հետ կնքել է թիվ 2.64 (ծածկագիրը՝ «ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-20/18») գնման պայմանագիրը, սակայն Պայմանագրով սահմանված ժամկետում չի կատարել իր կողմից ստանձնած պարտավորությունները ողջ ծավալով, ինչը հանգեցրել է պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը:

- Ընկերությունը 03.07.2018թ. մատակարարել է Պայմանագրի 5-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքը, որի վերաբերյալ ներկայացվել է հանձնման-ընդունման

արձանագրություն և դուրս է գրվել հաշիվ-ապրանքագիր՝ 299,999,88 ՀՀ դրամ գումարի չափով, սակայն Պայմանագրի կատարման արդյունքների վերաբերյալ Պատվիրատուի կողմից 31.07.2018թ. տրվել է բացասական եզրակացություն, այն հիմնավորմամբ, որ խախտվել է պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետը, որի արդյունքում 30.07.2018թ. վերոնշյալ Պայմանագիրը միակողմանի լուծվել է, թեև մատակարարված ապրանքի տեխնիկական բնութագիրը համապատասխանել է Հրավերով սահմանված պահանջներին:

- Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո Պատվիրատուն ժամանակին չի ապահովել բոլոր աշխատակիցների ներկայությունն անհատական չափսերը վերցնելու համար, և միայն 10.07.2018թ. դրությամբ է Ընկերությունն ունեցել Պատվիրատուի մոտ 80 տոկոս աշխատակիցների անհատական չափսերը:

- Պայմանագրի կատարման ընթացքում Պատվիրատուն Ընկերության կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման վերաբերյալ Ընկերությանն ուղղված որևէ գրավոր դիմում չի ներկայացրել:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ Պատվիրատուի կողմից մինչև Պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման վերջնաժամկետը անհատական չափսերը վերցնելու համար բոլոր աշխատակիցների ներկայությունը չապահովելու արդյունքում «ՄԱԴԵԼ» ՍՊԸ-ն զրկվել է Պայմանագրով նախատեսված ժամկետում ստանձնած պարտավորություններն ողջ ծավալով կատարելու հնարավորությունից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ՄԱԴԵԼ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով, 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 15.10.2018թ. թիվ 01.1/26-3/11906-18 գրությամբ «ՄԱԴԵԼ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00907267) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ